ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը Բրիտանական բիզնես դպրոցի բացմանը

Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ, Ազգային ժողովի հարգարժան պատգամավորներ, կառավարության հարգարժան անդամներ, Մեծ Բրիտանիայի հարգելի դեսպան, համալսարանի խորհրդի հարգելի անդամներ, հյուրեր, ներկաներ

Ինչպես գիտեք 2005թ. մայիսի 19-ին ստորագրված Բոլոնիայի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմյունիկեով Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին, որի վերջնանպատակը հայաստանյան կրթական համակարգը եվրոպական կրթական տարածքին ինտեգրելն էր: Սա բարեփոխումների մեծ և լուրջ ճանապարհ էր հայաստանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, իսկ այն գիտակցումը, որ եվրոպական կրթական համակարգը մեծ հեղինակություն ունի, ծանրակշիռ կռվան էր մեր ճանապարհին: Եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու ճանապարհին իր ուրույն ընթացքն է ունեցել նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը: Այստեղ ևս լուրջ քայլեր են կատարվել գործընթացը ներդնելու, համակարգը կյանքի կոչելու համար:

Համալսարանի միջազգայնացման գործընթացում մեծապես կարևորվել է եվրոպական, հատկապես բրիտանական կրթական հաստատությունների հետ համագործակցություն ձևավորելու հանգամանքը: Եվ այս առումով, բարեբախտաբար, մեր ջանքերը զուր չեն անցել:

Այսօր պատիվ ունենք ձեզ ներկայացնելու Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի նախագիծը, որը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և «Globe Education (GB) LTD» ընկերության միջև համագործակցության արդյունք է: Երկուստեք փոխգործակցության արդյունքում, Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ, այսուհետ մեր համալսարանում կգործի Բրիտանական բիզնես դպրոց՝ իր գործունեությունը սկսելով բիզնեսի կառավարման բրիտանական մագիստրոսական ծրագրի իրականացմամբ:

Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոցի ուսանողները բացառիկ հնարավորություն են ունենալու ուսումնառության ընթացքում, նույն ուսման վարձի շրջանակներում, երկու մոդուլի մասնակցել Լոնդոնի Կոմերցիայի դպրոցի այլ մասնաճյուղերում, այդ թվում՝ Լոնդոնում, Մալթայում և այլուր: Դասընթացը

հաջողությամբ ավարտած ուսանողները կստանան բրիտանական միջազգային ճանաչում ունեցող Անգլիա Ռասկին համալսարանի մագիստրոսի դիպլոմ:

Հարգելի հյուրեր

Բրիտանական բիզնես դպրոցի հիմնումը մեր համալսարանի միակ ձեռքբերումը չէ: Տնտեսագիտական համալսարանը վերջին տարիներին հաջողություն է արձանագրել նաև Եվրամիության Տեմպուսի ծրագրերում ընդգրկվելու առումով: Մեր համալսարանն այս պահին ընդգրկված է Տեմպուսի 7 և շվեյցարական 1 ծրագրերում: Ընդ որում, Տեմպուսի ծրագրերից մեկի՝ «Արարատի» դեպքում, բուհը նաև համակարգող է, ինչը նույնպես նորություն է համալսարանի պատմության մեջ:

Հարգելի հյուրեր

Ավելի քան 3 տարի «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում իրականացվում են բարեփոխումներ՝ միտված համալսարանի հեղինակության ամրապնդմանը, կրթական միջավայրի և կրթության որակի բարելավմանը, համալսարանում հետազոտական ուղղության զարգացմանը: Համալսարանի ավանդույթների պահպանման և առկա ձեռքբերումները նոր ժամանակներին ու մարտահրավերներին համահունչ զարգացնելու ճանապարհին մենք բավական հաջողություններ ենք ունեցել: Համալսարան մտնող յուրաքանչյուր ոք անզեն աչքով էլ տեսնում է, թե որքան է վերափոխվել մեր սիրելի համալսարանը՝ դարձել գրավիչ, ինքնատիպ միջավայրով, ուրույն ձևավորմամբ, տեխնիկապես վերազինված:

Մեզ համար շատ կարևոր է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը, որն առաջին խոշոր քայլն է համալսարանում գիտահետազոտական բաղադրիչն ամրապնդելու ուղղությամբ: Համալսարանի սեփական միջոցների 3,7 տոկոսը մենք հատկացնում ենք բուհական գիտության զարգացմանը: «Ամբերդը» հավակնում է դառնալ հայաստանյան պետական կառույցների, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ վերլուծություններ ու փորձագիտական մոտեցումներ առաջարկող հեղինակավոր կենտրոն:

Բուհի զարգացման բոլոր ուղղություններով մենք զգալի ձեռքբերումներ ունենք: Ուրախալի է, որ հերթական ձեռքբերումը համալսարանի միջազգայնացման ճանապարհին է, և մենք այսօր միասին տոնում ենք այս հաջողությունը:

Կրթությունը յուրաքանչյուր պետության համար առանցքային նշանակության ոլորտ է, պատմությունը վկայում է՝ զուր չեն ներդրումներն այս բնագավառում: Մեր երկրի ապագան, մեր բոլորի վաղվա օրը, պետության հեղինակությունն ու հաջողությունը, բարեկեցությունն ու ամրությունը պայմանավորված են նախ և առաջ կիրթ, գրագետ սերունդ ունենալու հանգամանքով: Ուստի մեր պարտքն է անշեղորեն շարունակելու մեր ճանապարհը, հետևողականորեն իրագործելու համալսարանական կրթության որակի բարձրացման պարտավորեցնող առաքելությունը:

Մեր բոլոր հաջողությունների համար մենք շնորհակալ ենք Հայաստանի Հանրապետության նախագահին, Ազգային ժողովին, Կառավարությանը, համալսարանի խորհրդի անդամներին՝ ի դեմս խորհրդի նախագահ հարգարժան պարոն Հովիկ Աբրահամյանի, և բոլոր այն մարդկանց, ովքեր ևս կարևորել են համալսարանի առաջխաղացումն ու հանդես եկել աջակցությամբ: Բիզնես դպրոցի ստեղծման համար ցանկանում եմ հատուկ շնորհակալություն հայտնել նաև Մեծ Բրիտանիայի մեր գործընկերներին՝ Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան ձերդ գերազանցություն Քեթրին Ջեյն Լիչին, Էլ Էս սի (LSC) խմբի խորհրդի նախագահ Լորդ Ջոն Թոմլինսոնին, խմբի գործադիր տնօրեն Թիմ Անդրադիին, Անգլիա Ռասկին համալսարանի ղեկավարությանը՝ ի դեմս այսօր ներկա պրոռեկտոր Թրեվոր Բոլթոնի, որոնց ջանքերի, կառուցողական համագործակցության և սրտացավ վերաբերմունքի շնորհիվ այսօր իրականություն է դարձել Հայաստանում Բրիտանական բիզնես դպրոց հիմնելու գաղափարը: Հուսով եմ, որ միջազգային այս նախագիծը մեծ հեղինակություն կբերի ոչ միայն մեր բուհին, այլև մեր երկրին: Հաջողություն ու բարի երթ եմ մաղթում բիզնես դպրոցին:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ